

«27» մայիս 2021թ.

No 2030 - Ա

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ  
ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ  
ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ինչպես նաև նպատակ ունենալով բարձրացնել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմանն ուղղված իմունականխարգելման գործընթացի արդյունավետությունը ծառայությունների տրամադրման ոլորտում՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Ծառայությունների տրամադրման ոլորտում՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմանն ուղղված իմունականխարգելման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ:

2. Հաստատել աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկողության և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն Արտավազդ Վանյանին և ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն Ալեքսանդր Բազարյանին՝

1) հյուրանոցային տնտեսության և հանրային սննդի օբյեկտների ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարողների (այսուհետ՝ տնտեսվարողներ)

մոտ (համաձայնությամբ) կազմակերպել և իրականացնել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմանն ուղղված իմունականխարգելման վերաբերյալ դասընթացներ:

2) տնտեսվարողների աշխատակիցների շրջանում պատվաստվել ցանկացող անձանց առկայության դեպքում ապահովել շարժական պատվաստումային խմբերի միջոցով կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումային գործընթացի կազմակերպում:

3) տնտեսվարողների ցանկության դեպքում վերջիններիս տրամադրել վկայականներ՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմանն ուղղված իմունականխարգելման վերաբերյալ դասընթացներին մասնակցելու և տնտեսվարողների աշխատակիցների կողմից կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստված լինելու վերաբերյալ:

4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ կազմակերպել և կանոնակարգել աշխատանքային խմբի աշխատանքները:

5. Աշխատանքային խմբին՝ աջակցել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմանն ուղղված իմունականխարգելման գործընթացի արդյունավետությանն ուղղված միջոցառումների անցկացմանը:

6. ՀՀ առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

**Հավելված**  
**Առողջապահության նախարարի**  
**2021 թվականի մայիսի 27- ի թիվ 2030 – Ա հրամանի**

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ**

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ**

1.	Ալեքսանդր Բազարյան	ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն (աշխատանքային խմբի ղեկավար)
2.	Լուսինե Պարոնյան	ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մարդու ու կենդանիների համար ընդհանուր և մակաբուծային հիվանդությունների համաճարակաբանության բաժնի պետ
3.	Մարիամ Մնացականյան	ՀՀ առողջապահության նախարարության հանրային առողջության բաժնի գլխավոր կազմակերպիչ
4.	Կարինե Աբրահամյան	ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի րավարան
5.	Աննա Իսահակյան	ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի նորմատիվների բաժնի փորձագետ
6.	Սիրանուշ Փիլոյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե (համաձայնությամբ)
7.	Ֆլորա Աթոյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե (համաձայնությամբ)
8.	Եկատերինա Մելքումյան	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչության գլխավոր տեսուչ (համաձայնությամբ)

9.	Միքայել Մայրապետյան	«Հայաստանի հյուրանոցների ասոցիացիա» ՀԿ-ի ՀԱՀ խորհրդի նախագահ (համաձայնությամբ)
10.	Հասմիկ Բարխուդարյան	«Ռեստորանների աջակցության միություն» ՀԿ (համաձայնությամբ)
11.	Գրիգոր Հովհաննիսյան	«Ռեստորանների ասոցիացիա» հանրային սննդի ոլորտի շահերի պաշտպանության ՀԿ (համաձայնությամբ)